

## Է Մ Ի Լ

Sanabilibus aegrotamus malis; ipsaque nos in rectum genitos natura, si emendari velimus, juvat.

SENECA, de ira 2, 13.

Այն ցաւերը, որով մենք հիւանդ ենք, բժշկելի են. նոյն իսկ բնութիւնը, որ ստեղծել է մեզ անստգտանելի գոյութեան համար, օգնում է մեզ՝ երբ կամենում ենք լաւանալ:

### ՀԵՂԻՆՍԿԻ ՅԱՌԱՋԱՐԱՆԸ

1. Նկատողութիւնների և դիտողութիւնների այս ժողովածուն, առանց դասաւորութեան և նոյն իսկ համարեա՛ առանց կապակցութեան, սկսել եմ մի բարի և մտածող մօր <sup>1)</sup> խնդիրը յարգելով: Սկզբում իմ մտադրութիւնն էր գրել միայն մի քանի էջից բաղկացած շարադրութիւն. բայց նիւթն առանց իմ գիտութեան և կամքի այնպէս գրաւեց ինձ, որ շարադրութիւնս աննկատելի կերպով կարգին գիրք դարձաւ. անկասկած գիրքս շատ աւելի մեծածաւալ է քան իւր բովանդակութիւնը, բայց շատ փոքր այն խնդրի համար, որով զբաղւում էի: Ես երկար ժամանակ տատանւում էի՝ թէ արդեօք հրատարակե՞մ այս աշխատութիւնը և աշխատելու միջոցին յաճախ մտածել եմ, որ մի քանի բրօշիւրների շարադրելը բաւական չէ՝ մի իսկական գիրք գրելու համար. Ուղղելու զուր փորձերից յետոյ,

<sup>1)</sup> Claude Dupin-ի ամուսին տիկին Chenonceaux. Ռուսօսն տիկնոջ քարտուղարն էր և հսկում էր նոյնպէս նրա զաւակների կրթութեանը:

կարծում եմ, որ այժմ պէտք է տամ այնպէս, ինչպէս որ կայ, որովհետեւ կարեւոր եմ համարում հասարակութեան ուշադրութիւնն այս խնդրի վրայ դարձնել. եթէ նոյն իսկ իմ հայեացքները ճիշտ չլինեն, ժամանակս դարձեալ բոլորովին կորցրած չեմ համարի՝ եթէ այս երկով կարողացայ ուրիշների մէջ ճիշտ հայեացքներ արթնացնել. Մի մարդ, որ իւր մենաւարութիւնից հեղինակութիւններ է հրապարակ հանում, առանց գովասանական ճառատեսների, առանց մի կուսակցութեան, որ պատրաստ լինէր պաշտպանելու դրանց, այո՛, նոյն իսկ առանց գիտնալու, թէ արդեօք այդ մասին ուրիշներն ի՞նչ են մտածում կամ խօսում—կարիք չունի վախենալու, որ եթէ սխալուի էլ, սխալներն առանց քննադատութեան կընդունուին:

2. Լաւ դաստիարակութեան կարեւորութեան մասին շատ բան չեմ ասի. նոյնպէս երկար չեմ ապացուցանի, որ մեր սովորական դաստիարակութեան եղանակը վատ է. ինձնից առաջ ուրիշ հազարաւոր մարդիկ արել են այդ և ես չեմ կարող դիրքս այնպիսի բաներով լցնել, որ յայտնի են ամեն մարդու ևս նկատում եմ միայն, որ անյիշելի ժամանակներից միմիայն ձայն կայ տիրող փորձականի դէմ, բայց ոչ որ չէ մտածում աւելի լաւն առաջարկելու. Մեր դարում գրականութիւնն ու գիտնականութիւնը ձգտում են աւելի տապալելու, բան շինելու. Ամեն բան բարձրից են քննադատում. առաջարկութիւններ անելու համար ուրիշ եղանակ է պէտք, բայց դրանով մեր փիլիսոփայութեան վեհութիւնը նսեմանում է: Չսպելով այն բազմաթիւ գրքերին, որոնք, ինչպէս պնդում են հեղինակները, միմիայն հասարակաց օգուտն ի նկատի ունին, ամենաօգտակարը, այն է մարդ կրթելու արուեստը դեռ ևս շարունակ մոռացութեան է արուել. Իմ շօշափած խնդիրը նոյն իսկ Լօքէի գրքից յետոյ, դեռ ևս բոլորովին անձեռնմխելի էր մնացել և ես մեծ երկիւղ եմ կրում, որ նոյնը կլինի և իմ գրքից յետոյ:

3. Մանկութիւնը բոլորովին անծանօթ բան է մեզ համար. այն մոլար հայեացքներով, որ ունինք մանկութեան մասին, պէտք է հետզհետէ աւելի մտրուելնք. Ամենաիմաստուններն ի նկատի ունին որոշ չափով տեղեկութիւնների կարեւորութիւնը, առանց կշռադատելու, թէ ի՞նչ կարող են սովորել մանուկները: Նրանք մանկան մէջ միշտ որոնում են մարդուն, առանց մտածելու՝ թէ առա՞ջ ինչ է լինում. Այս վերջինն է եղել իմ հետազոտութիւնների առանձին նպատակը, որպէս զի, եթէ

մեթօղս նոյն իսկ երևակայական և թիւր լինի, այնուամենայնիւ իմ դիտողութիւններից ուրիշները կարողանան օգտուել: Պարող է պատահել, որ իմ վերցրած չափերը ճիշտ չլինեն, բայց այն նպատակը, դէպի որը պէտք է ձգտենք, կարծեմ որ ճիշտ եմ ըմբռնել: Սկսիր ուրեմն աւելի լաւ քննել սանիդ, որովհետեւ հաւաստի կերպով չես ճանաչում նրան և երբ յետոյ այդ նկատուով իմ դիրքը կարդաս, կարող է բեղ օրուտ բերել:

4. Իմ բաժանումը, որ ուրիշները սխտեմատիկական կանուանեն, բայց ինձ մօտ բնութեան ընթացքին է համապատասխանում, ընթերցողին ամենից շատ օտարոտի կթուայ. այս կետում ևս անկասկած կհակառակեն ինձ և զուգէ ոչ անիրաւացի կերպով: Իմ գրքի ընթերցողները չեն կարծի, թէ դաստիարակութեան մասին են կարդում, այլ մի երևակայողի ցնորքները՝ դաստիարակութեան գործի վերաբերմամբ: Ինչ անեմ: Ես չեմ գրում ուրիշների մտքերի համեմատ, այլ իմ սեպհական մտքերով: Ես իրերն այնպէս չեմ տեսնում, ինչպէս ուրիշները. այս յանդիմանութիւնը վաղուց են արել ինձ: Բայց մի՞թէ ես կարող եմ ուրիշ աչքեր ունենալ, կարող եմ օտար մտքեր աւաջացնել իմ մէջ:— Ո՛չ. միայն այնչափ կարող եմ անել, որ ինձ ամբողջ աշխարհից աւելի իմաստուն չեմ կարծի. ես թէև առանց այլևայլութեան իմ կարծիքը չեմ փոխի, բայց իմ տարակուսանքները կյայտնեմ. այս է այն ամենը, ինչ որ կարող եմ անել և այդ էլ անում եմ: Եթէ երբեմն վճռական եղանակով եմ խօսում, դրանով չեմ ուզում ընթերցողին ուժով համոզել, այլ ուզում եմ ասել նրան այն, ինչ որ մտածում եմ: Ինչո՞ւ պէտք է կասկածելի կերպով առաջ բերեմ այն, ինչի մասին որ ինքս կասկած չունիմ: Ես ուզում եմ ճշտութեամբ տալ այն, ինչ որ տեղի է ունենում իմ հոգու մէջ:

5. Մինչ այժմ ամենայն պատուութեամբ իմ հայեացքն եմ բացատրում, չեմ ուզում անհերքելի համարել այն, այլ նոյն լակ առաջ եմ բերում և իմ հիմունքները, որպէս զի դրանցով կշռեն և քննադատեն ինձ. բայց եթէ չեմ ուզում դրանց վրայ յենուելով՝ իմ մտքերի դէմ վիճել, սակայն և այնպէս պարտքս եմ համարում առաջ բերել, որովհետեւ այն մտքերը, որոնց մասին ուրիշների կարծիքի հակառակ հայեացք ունիմ, բողբոլվին անկարևոր չեն: Նրանք պատկանում են այն մտքերի շարքին, որոնց ճշտութիւնը կամ սխալ լինելն ճանաչելը մեծ նշանակու-

Թիւն ունի և որոնք մարդկային ցեղի երջանկութիւնն ու զըժ-  
րադուութիւնն են կազմում:

6. Ինձ պէտք է կրկին և կրկին անգամ առարկեն. առա-  
ջարկութիւններ անելիս՝ բաւականացիր միայն նրանով, ինչ որ  
կարելի է. Կարող էին ասել նոյնպէս. բաւականացիր նրանով,  
ինչ որ մարդիկ սովոր են անելու կամ թէ այնպիսի առաջար-  
կութիւններ արած, որոնց կարելի լինի եղած անպատեհութիւն-  
ների հետ համաձայնեցնել. Մի այդպիսի դիտաւորութիւն որոշ  
շրջաններում աւելի երևակայական կլինի, քան թէ իմը. որով-  
հետև երբ իրերն այդպէս ենք կապակցում միմեանց հետ, լա-  
ւոր փշտնում և վատը չէ լրւանում: Իսկապէս լաւին կիսով չափ  
հետևելուց ես կգերադասեի սովորական եղանակին հետևելը-  
այդպիսով աւելի քիչ հակասութիւն կտեսողծուի մարդու մէջ:  
Մարդս միաժամանակ չի կարող երկու իրար հակառակ նպա-  
տակների ձգտել. Կարելին, հայրե՛ր և մայրե՛ր, հենց այն է,  
ինչ որ դուք կարող էք անել. արդեօք ես պէտք է ձեր բարի  
կամքի տե՛ղը բռնեմ:

7. Ամեն տեսակ նախագիծ ունենալիս՝ երկու բան պէտք  
է կշռադատել. առաջին՝ ծրագրի գերազանցութիւնն ինքն ըստ  
ինքեան և երկրորդ՝ իրագործման դիւրութիւնը:

8. Առաջին նկատմամբ ծրագրի ընդունելութեան և իրա-  
գործման համար բաւական է, որ նրա բարին մատակարարած,  
նոյն իսկ իրի բնական յատկութիւնը լինի, որ առաջարկուած  
դաստիարակութեան եղանակը մարդուն յարմար և մարդկային  
սրտին պատշաճ լինի:

9. Երկրորդ կշռադատութիւնը կախումն ունի այն հան-  
գամանքներից, որ առաջանում են որոշ դրութիւնների մէջ: Այս  
հանգամանքները գործի համար էական նշանակութիւն չունին  
և այդ պատճառով էլ կարևոր չեն և անվերջ փոփոխական են:  
Այսպէս օրինակ՝ դաստիարակութեան մի տեսակը կարող է ի-  
րագործելի լինել Ձուկիցերիայում, բայց ո՛չ Փրանսիայում. մի-  
ուրիշը հասարակ մարդու, երրորդը մեծամեծների համար. Ի-  
րագործման մեծ կամ փոքր դիւրութիւնը կախումն ունի հա-  
պարակոր հանգամանքներից, որոնց անկարելի է ուրիշ կերպ  
որոշել բացի մեթօդի այս կամ այն երկրին յարմարեցրած մաս-  
նաւոր գործադրութիւնից, այս կամ այն պայմանով: Բայց ո-  
րովհետև մասնաւոր գործադրութիւններն իմ նպատակի համար  
էական չեն, այդ դատճառով էլ ոչինչ դեր չեն կատարում ծը-

զբազրիս մէջ: Ուրիշները կարող են, եթէ կամենան, դրանով  
 զբազուել՝ ամեն մէկն այն երկրի կամ պետութեան համար,  
 որն ի նկատի ունի: Ես գոհ կլինեմ, եթէ ամեն տեղ ծնուած  
 մարդկանցից կարելի լինի դարձնել այն, ինչ որ իմ ծրագիրն  
 է խոստանում և այդպիսով թէ նրանց և թէ ուրիշների համար  
 արուած կլինի ամենալաւը: Եթէ ես այս պարտաւորութիւնը  
 չկատարեմ, ակներև կերպով անարդար կլինեմ: Իսկ եթէ կա-  
 տարեմ, ինձնից աւելին պահանջողներն անարդար կլինեն, ո-  
 րովհետև ես դրանից աւելի չեմ խոստանում:



## ԳԻՐԳ ԱՌԱՋԻՆ <sup>1)</sup>

1. Ամեն բան լաւ է, ինչպէս որ ստեղծուած է Արարչի ձեռքով. ամեն բան այլասերուում է մարդու ձեռքին: Մարդու ստիպմամբ երկիրն ուրիշ երկրի արգասիքն է սնուցանում, ծառն ուրիշ ծառի պտուղն է տալիս: Մարդը խառնում ու շփոթում է կլիմաները, տարբերը, եղանակները, խեղում է իր ձին, իր շունը, իր սարուկը. ամեն բան տակն ու վրայ է անում, ամեն բան այլափոխում է: Նա սիրում է տձեն ու անձոռնին, ոչինչ չէ ուզում ունենալ այնպէս, ինչպէս որ ստեղծել է բնութիւնը, մինչև անգամ մարդուն ուզում է իր ձիու պէս պատրաստել և իր այդու ծառի նման որոշ ուղղութեամբ մեծացնել՝ ըստ վերջին նորաձեւութեան:

2. Բայց առանց այդ բանի ամեն ինչ աւելի ևս վատ կլինէր. մեր ցեղը չի ուզում միայն կիսով չափ ուղղուել: Իրերի վիճակին նայելով՝ այսուհետև եթէ մի մարդու իր ծննդեան օրից սկսած անխնամ և անուշադիր թողնենք մարդկային հասարակութեան մէջ, ամենից այլասերուածը կլինի. նախապաշարմունքը, ազդեցութիւնը, ստիպմունքը, օրինակը և մեզ հետ ղեղող բոլոր ընկերական կարգաւորութիւնները կխեղդեն նրա մէջ բնութիւնը և նրա տեղը ոչինչ չեն թողնի: Նրա վիճակը կ'մանուկի դիպուածով խճուղու վրայ բուսած այն փոքրիկ ծառին, որին անցորդներն աջ ու ձախ կողմից շարունակ դիպչելով և ամեն կողմը ծռելով շուտով փչացնում են:

3. Այդ պատճառով ահա բեզ եմ դիմում բնքոյշ և նախահոգ մայր <sup>2)</sup>, որիդ յաջողուել է ընդարձակ խճուղուց հեռու մնալ և աճող փոքրիկ ծառը մարդկային կարծիքների փոթորկից:

<sup>1)</sup> Առաջին գրքի բովանդակութիւնն է. բնութիւնը, ընկերութիւնը, աշխարհը և դրանց յարաբերութիւնը դաստիարակութեան հետ. կեանքի առաջին տարին: Էփի անունը յիշուում է 75-րդ §-:

<sup>2)</sup> Ամենից մեծ նշանակութիւն ունի սկզբնական դաստիար-

պաշտպանել: Խնամի՛ր, ջրի՛ր մատաղ բոյսը՝ ծիւրելուց առաջ-  
 նրա պտուղը ժամանակով ցնծութիւն կպատճառէ քեզ: Օր ա-  
 ռաջ պատուար քաշիր երեխայիդ հոգու շուրջը: մի ուրիշը կա-

րակութիւնը. իսկ այդ սկզբնաւորութիւնն անվիճելի կերպով  
 կանանց է պատկանում: Եթէ Արարիչն այդ կամենար տղա-  
 մարդկանց տալ, այն ժամանակ նրանց կաթը կտար՝ երեխա-  
 ներին կերակրելու: Այդ պատճառով դաստիարակութեան վե-  
 րաբերնալ գործերի մէջ ամենից առաւել պէտք է կանանց մա-  
 սին խօսել, որովհետեւ ըացի նրանից, որ նրանք միջոց ունին  
 աւելի ճշտութեամբ հսկելու և միշտ աւելի մեծ ազդեցութիւն  
 ունենալու դաստիարակութեան վրայ քան տղամարդիկ, նրանք  
 աւելի շահակից են յաջող ելլին, որովհետեւ այրի կանանց մեծ  
 մասը համարեա թէ իրենց զաւակների ողորմութեամբն են  
 ապրում: այս դէպքում ահա՛ նրանք իրենց տուած դաստիարա-  
 կութեան լաւ կամ վատ ազդեցութեան պտուղը վայելում են:  
 Օրէնքները, որ միշտ աւելի շատ զբաղում են ստացուածքով  
 քան անհատներով—որովհետեւ նրանց նպատակն է խղաղու-  
 թիւնը և ոչ առաքինութիւնը—, բաւականաչափ ազդեցութեան  
 իրաւունք չեն տալիս մայրերին: Բայց այնուամենայնիւ մայ-  
 րերի դրութիւնը շատ աւելի որոշ է, քան թէ հայրերինը:  
 առաջինների պարտականութիւններն աւելի դժուար են և նը-  
 րանց հոգացողութիւնն աւելի է օժանդակում ընտանեկան լաւ  
 կարգապահութեանը: Ընդհանրապէս նրանք աւելի միտումն ու-  
 նին դէպի երեխաները: Պան դէպքեր, ուր մի կերպ կարելի է  
 ներել որդուն, երբ նա պատշաճ յարգանքը չէ ցոյց տալիս  
 հօրը, բայց եթէ մի ո՞րև է դէպքում երեխան այնքան պլաստի-  
 ղուելի է, որ յարգանքով չէ վերաբերում մօրը, որ իր արգան-  
 դումն է կրել նրան, իր ստիներով կերակրել, երկար տարիներ  
 շարունակ իրեն մոռանալով՝ նրան է նուիրուել—պէտք է այդ  
 թշուառ արարածին քստ կարելոյն շուտ ոչնչացնել ինչպէս մի  
 հրէշի, որ արժանի չէ արևի երեսը տեսնելու: Ասում են՝ թէ  
 մայրերն երես են տալիս երեխաներին, այդտեղ հարկաւ նրանք  
 արդար չեն, բայց գուցէ աւելի պակաս չափով, քան նրանց  
 ստորացնողները: Մայրը կամենում է, որ որդին երջանիկ լինի  
 և իսկոյն. այդտեղ նա իրաւունք ունի և եթէ միջոցներ գործ  
 դնելիս սխալում է, պէտք է բացատրել ու հասկացնել նրան:  
 Հայրերի փառասիրութիւնը, ժլատութիւնը, ճնշումը, սխալ  
 հասկացուած նախազուշուութիւնը, նրանց անփութութիւնը, կոշտ  
 անզգայութիւնը՝ հարիւր անգամ աւելի ճակատագրական են,  
 քան թէ մայրերի կոյր ու գորովալի քնքշութիւնը: Ես յետոյ  
 դարձեալ կպարզեմ միտքս՝ թէ ինչ եմ հասկանում մայր ա-  
 նուան ներքոյ:

րող է դրսից այդ սահմանափակել սակայն միմիայն դու պէտք է չափը որոշես <sup>1)</sup>։

4. Բոյսին մի որոշ ձև են տալիս մշակման եղանակով, իսկ մարդուն՝ դաստիարակութեամբ, Եթէ մարդս աշխարհ դար մեծ և ուժեղ, նրա մեծութիւնն ու յոյժն անօգուտ կլինէին նրա համար մինչև այն վայրկեանը, մինչև որ կտոկորէր դրանց իրեն ծառայեցնելու կերպը. այդ յոյժն ու մեծութիւնը մինչև անգամ վտանգաւոր կլինէին նրա համար, որովհետև ուրիշներին կարգելէին՝ նրանցն օգնութեան հասնելու <sup>2)</sup>։ Իսկ եթէ երեխային մենակ թողնէինք, նա իր կարիքները ճանաչելուց առաջ՝ թշուառութեան մէջ կկորչէր։ Մանկութեան վիճակն ողորալի է թուում, բայց չենք ուզում մտածել որ մարդկային ցեղը վաղուց արդէն ոչնչացած կլինէր, եթէ մարդս իր գոյութիւնն իրրև մանուկ չսկսէր։

5. Աշխարհ ենք գալիս թոյլ՝ և յոյժի կարիք ունինք, ամեն բանից մերկացած՝ և օգնութեան պէտք ունինք, հոգուով տկար՝ և դաստիարակութեան կարիք ունինք։ Այն բոլորը, ինչ որ ծնուելու միջոցին չունինք և ինչ որ պէտք է մեզ չափահաս ժամանակ՝ դաստիարակութեան միջնորդութեամբ պէտք է ձեռք բերենք։

6. Դաստիարակութեան աղբիւրներն են կամ բնութիւնը, կամ մարդիկ կամ թէ իրերը։ Մեր ընդունակութիւնների և գործարանների ներքին կազմակերպութիւնը բնութեան դաստիարակութիւնն է. այս կազմակերպութեան կիրառութեան ուսուցումը մարդկանց դաստիարակութիւնն է. անձնական փորձառութիւն ձեռք բերելն այն առարկաների նկատմամբ, որ ազդեցութիւն են ունենում մեզ վրայ, իրերի դաստիարակութիւնն է։

7. Դաստիարակութեան միջոցին ուրեմն միշտ միասին են

<sup>1)</sup> Այսինքն. գուցէ մայրը չգիտէ թէ մինչև որ սահմանը պէտք է հասցնէ երեխային իր դաստիարակութեամբ, բայց բնազդմամբ նա իր երեխային կպաշտպանէ ապօրինի ազդեցութիւնից։

<sup>2)</sup> Արտաքինով ուրիշներէն նմանուելով, բայց առանց խօսքերի և մտքերի չկարողանալով արտայայտել իր ներքին աշխարհը, նա չէր կարող նաև ուրիշներին հասկացնել, որ ինքը կարօտ է նրանց օգնութեանը և այդպիսով այդ կարիքը չէր կարող երևան գար։

գործում երեք տեսակ ուսուցիչներ, Այն աշակերտը, որի մէջ այդ տարբեր ուսմունքներն իրար հետ կռիւ են մղում, վատ դաստիարակուած կլինի և երբէք չի կարող ինքն իրեն հետ համաձայն գտնուել. իսկ այն աշակերտը, որի մէջ այդ ամենն էլ նոյն կէտումն են հանդիպում և նոյն նպատակներին ձգտում, հասնում է իր նպատակին և ապրում է՝ ինչպէս որ պէտք է՝ նա է միայն լաւ դաստիարակուածը:

8. Այս երեք տարբեր տեսակ դաստիարակութիւններից՝ բնութեան դաստիարակութիւնը մեզնից կախումն չունի, իրերի դաստիարակութիւնը միայն որոշ նկատմամբ, միայն մարդկանց դաստիարակութիւնն է իսկապէս մեր ձեռքին, բայց այդ էլ միայն որոշ ենթադրութեամբ, որովհետև ո՞վ կարող է յուսալ՝ զեկավարելու մանկանը շրջապատող բոլոր մարդկանց խօսածներն ու գործածները:

9. Եթէ դաստիարակութիւնը արուեստ է, այն ժամանակ համարեա՞ թէ անկարելի է յաջող կերպով դաստիարակել, որովհետև այդ յաջողութեան համար անհրաժեշտ գործակցութիւնը մարդուս ուժերից վեր է: Ամեն տեսակ հնարաւոր հոգացողութեամբ՝ կարելի է նպատակին քիչ կամ շատ մօտենալ, իսկ հասնելու համար պէտք է առանձին բազմ ունենալ:

10. Բայց ո՞րն է դաստիարակութեան նպատակը. այդ կարող է լինել միմիայն բնութեան նպատակը, ինչպէս որ վերևը ցոյց տուինք: Եւ որովհետև բոլոր երեք տեսակ դաստիարակութիւնների գործակցութիւնն անհրաժեշտ է նրա ամբողջացման համար, մենք պէտք է միւս երկուսն էլ ուղղենք դէպի բնութիւնը, որի վրայ իշխանութիւն կամ ազդեցութիւն չունենք: Բայց գուցէ բնութեան գաղափարն անորոշ է, աշխատենք ուրեմն որոշել:

11. Ասում են, թէ բնութիւնն ոչ այլ ինչ է, եթէ ոչ սովորութիւն: Ի՞նչ է նշանակում այդ: Մի՞թէ չկան այնպիսի սովորութիւններ, որ մարդ ստիպուած է լինում ընդունել և թրոնք երբէք չեն ծնշում բնութիւնը. օրինակի համար բոյսերի այն սովորութիւնը, որ ուղղահայեաց են աճում և մարդիկ արգելք են լինում: Եթէ արգելքը վերցնենք, բոյսը դարձեալ կպահպանի ստիպմամբ ընդունած հակումը, բայց այնուամենայնիւ նրա նիւթն իր սկզբնական ուղղութիւնը չէ կորցնում և երբ բոյսը շարունակում է աճել, նրա ըստ երկարութեան ար-

ձակած ծիլերը՝ դարձեալ դէպի վեր են ուղղուում: Այսպէս են նաև մարդկանց հակումները: Որքան ժամանակ մարդ նոյն գրութեան մէջ մնայ, կարող է այն հակումները պահպանել, որ սովորութիւնից են առաջանում՝ եթէ նոյն իսկ այդ սովորութիւնները շատ քիչ բնական լինին. բայց հենց որ գրութիւնը փոխուի, սովորութիւնն էլ կորցնում է յոժը և նորից առաջ է գալիս բնական հակումը: Հարկաւ դաստիարակութիւնը սովորութիւն է միայն: Բայց միթէ չկան այնպիսի մարդիկ, որ մտանում են իրենց դաստիարակութիւնը և նաև այնպիսիները, որ պահպանում են: Ինչի՞ց է առաջանում այս տարբերութիւնը: Եթէ բնութիւն խօսքը պէտք է սահմանափակուի բնութեան հանգոյն սովորութիւններով, այն ժամանակ աւելորդ է այդ անմիտ զրարանութիւնը:

12. Մենք զգայութիւններով ենք աշխարհ գալիս և ծնունդու օրից սկսած՝ մեզ շրջապատող առարկաները տարբեր կերպով են աչդում մեզ վրայ: Հենց որ մեր զգայութիւնները, այսպէս ասած, գիտակցութեան են գալիս, սկզբում հակումն ենք զգում այդ զգայութիւններն առաջացնող առարկաները ձեռք բերելու կամ դրանցից խոյս տալու՝ նայելով թէ հաճելի են մեզ թէ անհաճոյ. բայց յետոյ այդ տեսակէտից դեր են խաղում նաև պատշաճութիւնը կամ անպատշաճութիւնը ինչպէս և այն դատողութիւնը, որ մենք տալիս ենք՝ երջանկութեան և կատարելութեան մասին՝ մեր խոհականութեամբ կազմած գաղափարով: Որչափ մեր զգայունութիւնն ու զարգացումն աճում է, այնքան ևս ընդարձակում ու հաստատում է այդ հակումը: Բայց որովհետև հակումը միշտ մեր սովորութիւնների ճնշման ներքոյ է, մեծ կամ փոքր փոփոխութիւնների է ենթարկում մեր կարծիքների հիման վրայ: Սրանցից առաջ եղածն է, որ ես անուանում եմ մեր մէջն եղած բնութիւն:

13. Ամեն բան պէտք էր այս սկզբնական հակումների վրայ հիմնել և այդ շատ հեշտ կլինէր, եթէ մեր դաստիարակութեան երեք ճանապարհները միմիայն տարբեր լինէին միմեանցից, բայց ինչ պէտք է անենք, երբ դրանք միմեանց հակառակ ուղղութեամբ են գնում, երբ մենք մարդուն փոխանակ իրեն համար դաստիարակելու՝ ուրիշների համար ենք ուզում դաստիարակել: Այդ դէպքում ամեն միութիւն անկարելի է: Մենք պէտք է անհրաժեշտ կերպով կամ բնութեան դէմ կոխ մղենք, կամ թէ ընկերական կազմակերպութեան. պէտք է վրձ-

ունք՝ թէ արդեօք մարդ ենք ուզում կրթել թէ քաղաքացի, որովհետեւ երկուսը միասին միաժամանակ չի կարելի:

14. Իւրաքանչիւր առանձնացած ընկերութիւն, եթէ շատ մեծ չէ և լաւ միացած, օտարանում է ընդհանուր ընկերութիւնից: Ամեն Տայրենասէր խիստ հակառակ է օտար երկրացիներին, նրանք միայն մարդիկ են, նրա աչքում նրանք հաշուի չեն առնուում <sup>1)</sup>: Սա մի անձողոպելի անպատեհութիւն է: Բայց աննշան, Էականը դէպի այն մարդիկն ունեցած բարուութիւնն է, որոնց հետ ապրում ենք: Սպարտացին դուրսը փառասէր, ազաս և անարդար էր, իսկ իր պարիսպների շրջափակում տիրում էր անձնուրացութիւն, արդարութիւն, միաբանութիւն: Լսել անգամ չեմ ուզում այն աշխարհաքաղաքացիներին մասին, որոնք լրենց գրքերից այնպիսի պարտականութիւններ են հետախուզում, որոնց չեն ուզում ենթարկուել իրենց շրջակայքում: Փիլիսոփաներից ոմանք սիրում են թաթարներին, որպէս զի ազատ լինեն իրենց դրացիներին սիրելու պարտականութիւնից:

15. Բնական մարդն ինքն իրեն համար ամեն բան է. նա մի անքակտելի միութիւն է, մի բացարձակ ամբողջութիւն, որ յարաբերութիւն ունի միայն իր և իր նմանների հետ: Քաղաքացի մարդը մի միաւոր է կոտորակի մէջ, որ կախումն ունի յայտարարից և որի արժէքը որոշում է նրա ունեցած յարաբերութիւնն ամբողջի, այսինքն ընկերական ամբողջութեան հետ: Լաւ ընկերական կազմակերպութիւնները նրանք են, որ մարդուն ամենից լաւ են օտարացնում ընութիւնից, որ նրան իր ինքնուրոյն գոյութեան փոխարէն պայմանական գոյութիւն են տալիս և նրա եսն ընդհանուր ամբողջութեան մէջ ձուլում, այնպէս որ իւրաքանչիւր անհատ այլ ևս իրեն իբրև միութիւն չէ զգում, այլ իբրև ամբողջի մասը և ամբողջի հետ միատեղ է միայն զգում: Հոովմի քաղաքացին ոչ Վայոս էր և ոչ Լուցիոս, նա միայն հոովմայեցի էր և նոյն իսկ իր Տայրենասիրութեան մէջ՝ անխնայ իր անձի դէմ: Ռեզուլտան ուզում էր կարթագինացի լինել, որովհետև իր տէրերի սեպհականութիւնն էր, Իբրև օտարական՝ նա մերժեց սենատում իր տեղը բռնել. մի կարթա-

<sup>1)</sup> Ազատ պետութիւնների պատերազմներն աւելի սարսափելի են, քան թէ միապետութիւններինը: Բայց եթէ թաղաւորների պատերազմները չափաւոր են, ընդհակառակը նրանց խաղաղութիւնը սոսկալի է:

գինացի պէտք է հրամայէր նրան այդ անելու, Երբ ուզում էին նրա կեանքը փրկել՝ դժկամակութեամբ մերժեց, նա յաղթեց և ցնծութեամբ վերադարձաւ՝ դժնդակ մահով մեռնելու Վարժեմ մեր ճանաչած մարդիկն այսպէս չեն:

16. Լակեղեմնացի Պէդարէտոսը խնդրում է, որ ընդունուի երեք հարիւրի խորհրդի մէջ: Նրան մերժում են, իսկ նա տուն վերադառնալով ուրախանում է, որ Սպարապյում իրենից աւելի արժանաւոր երեք հարիւր մարդիկ կան: Ես ընդունում եմ, որ նա լրջօրէն էր իր ուրախութիւնն արտայայտում և հաւատալու էլ հիմք կայ:—Այդպէս է իսկական քաղաքացին:

17. Մի սպարապցի կնոջ հինգ որդիքը պատերազմումն էին և նա տեղեկութիւնների էր սպասում կռուի մասին. պատերազմից վերադարձող հելոսին դողալով հարցնում է կռուի մասին.—բո հինգ որդիքն էլ սպանուեցան:—Յա՛ծ ստրուկ, ա՛յդ հարցրի բեկ— Յաղթութիւնը մե՛նք տարանք:—Մայրը շտապով դնում է տաճար և աստուածներին շնորհակալութիւն յայտնում:—Ահա ձձարիտ քաղաքացի կինը:

18. Ով քաղաքացիական կազմակերպութեան մէջ բնական զգացմանց սկզբնականութիւնն է ուղում պահպանել, նա չգիտէ թէ ի՞նչ է կամենում: Նա շարունակ ինքն իրեն չակասելով, շարունակ այս ու այն կողմը տատանուելով իր հակումների և պարտականութիւնների մէջ, ելքէք ոչ մարդ կլինի և ոչ քաղաքացի. նա ո՛չ էր և ոչ էլ ուրիշների վերաբերմամբ արդար կըլինի: Նա մի մարդ կլինի, ինչպէս որ կան այժմ մարդիկ իբրև մի ֆրանսիացի, անգղիացի, մի քաղաքացի, մի ոչնչութիւն:

19. Մի բան լինելու, սեպհական առանձին գոյութիւնն ունենալու համար՝ պէտք է գործել, ինչպէս ասում են, պէտք է միշտ վճռած ունենալ թէ ի՞նչ ճանապարհով պէտք է դնալ և բացարձակ ու անսասան հետևել դրան. Ես կուլիսայի այդ զարմանալի մարդուն տեսնել գիտնալու համար՝ թէ արդեօք նա մա՛րդ է, թէ քաղաքացի կամ թէ ի՞նչպէս կվարուի, որ երկուսը միասին լինի:

20. Այս անպայման հակադրութեան մէջ գտնուող նպատակներից բղթում են երկու տեսակ հակասական հրահանգներ. մէկը հասարակական և միաբանական, միւսն առանձնական և ընտանեկան:

21. Հասարակական դաստիարակութեան մասին գաղափար ստանալու համար կարգա Պդատոնի հասարակապետութիւնը. քա-

դաքական գրուածք չէ այդ, ինչպէս կարծում են նրանք, որոնք գրքերի մասին դատողութիւն են տալիս՝ միայն վերնագրին նայելով. այդ գիրքն ընդհակառակը դաստիարակութեան մասին երբ և իցէ գրուած աշխատութիւններից ամենասիրունն է:

22. Երբ ուզում ենք ցնորքների մասին խօսել, յիշում ենք Պղատօնի կազմակերպութիւնները. եթէ Լիկուրգոսն էլ իր կազմակերպութիւնները միմիայն գրաւոր աւանդած լինէր, ես էրանց աւելի ցնորական կանուանէի: Պղատօնը միայն մարդու սիրտն աշնուացրեց, Լիկուրգոսը ընութիւնից օտարացրեց նրան:

23. Չկայ այլ ևս հասարակական դաստիարակութիւն, և չի էլ կարող լինել որովհետեւ՝ որտեղ այլևս հայրենիք չկայ, քաղաքացիներ էլ չեն կարող լինել՝ «հայրենիք» և «քաղաքացի» խօսքերը պէտք է ջնջուին նոր լեզուների միջից: Ես լազիտեմ՝ թէ ինչու, բայց չեմ կարող ասել. նպատակիս համար էլ կարևոր չէ:

24. Այն ծիծաղելի հաստատութիւնները, որ Վոլլէգ անունն են կրում, ես չեմ համարում հասարակական դաստիարակութեան գործիք: Նոյնպէս և ընկերական դաստիարակութիւնը հասարակական չէ, որովհետեւ երկու նպատակի է ձգտում և ոչ մէկին չէ հասնում. նա միայն նրա համար է, որ երկերեսանի մարդիկ առաջ բերէ, որոնք ըստ երևոյթին կարծես թէ ամեն բան ուրիշի նկատմամբ են անում, մինչդեռ միշտ միմիայն իրենց ունեն ի նկատի: Բայց այս քաղցրահնչիւն հաւաստացումներն ամբողջ աշխարհի խօսակցութեան նիւթն են, այնպէս որ այլ ևս ոչ ոք դրանով չէ կարող խաբել: Ուրեմն չարժէ և խօսել այդ մասին:

25. Այս հակասութիւններից առաջանում է մի ուրիշը՝ որ ամեն օր ինքներս փորձում ենք մեզ վրայ: Բնութիւնը և մարդիկ միմեանց հակառակ ուղղութեամբ քաշելով մեզ և մենք էլ ստիպուած լինելով այդ երկու տարբեր մղման մէջ բաժանուելու՝ հետևում ենք մի երբորդ, միջին ճանապարհի, որ մեզ ոչ մէկ նպատակին է հասցնում և ոչ միւսին: Այսպիսի տաղտուկ և անհաստատ վիճակի մէջ ենք անցկացնում մեր ամբողջ կեանքը և մեռնում՝ առանց ինքներս մեզ հետ համաձայնութիւն կայացնելու, առանց պէտքական լինելու՝ թէ մեզ և թէ ուրիշներին:

26. Ուրեմն մնում է միայն ընտանեկան կամ ընութեան դաստիարակութիւնը. բայց միմիայն ինքն իրեն համար դաս-

տիարակուած մարդը ուրիշներէ համար ի՞նչ պէտք է անէ, Եթէ նոյն իսկ միայն մի մարդ կարողանար առաջադրուած կրկնակի նպատակին հասնել միաժամանակ թերևս այս հակասութեանց ոչնչացմամբ՝ մարդու երջանկութեան մի մեծ արդելքը մէջտեղից կվերանար. Սյդ մասին դատողութիւն տալու համար՝ կարևոր կլինէր աչքի առաջ ունենալ այսպիսի մի կատարելագործուած մարդ, պէտք կլինէր նրա հակումները դիտել յառաջագիմութիւնը նկատել, և նրա զարգացման ընթացքին հետամուտ լինել. մի խօսքով՝ պէտք է ճանաչէինք ընական մարդուն. Ես կարծում եմ, որ այս դիրքը կարգալով՝ մարդ մի բանի քայլ առաջ գնացած կլինի այդ ուղղութեամբ:

27. Ի՞նչ պէտք է անենք այդ արտակարգ մարդուն զարգացնելու համար. Անկասկած շատ բան.—պէտք է արգելենք, որ մի որ և է բան անուի. Երբ խնդիրը վերաբերում է բամու հակառակ նաւելուն, պէտք է կամակորութեամբ առաջ գնանք, իսկ երբ ծովի ալիքները բարձրանում են, բայց մենք ուզում ենք միևնոյն տեղը մնալ՝ պէտք է արիստոս նետենք, Զգուշացի՛ր, երիտասարդ նաւավար, որ բո պարանը ջրից չտարուի կամ թէ խարխիւդ յատակը չահօսէ և նաւն առաջ չմղուի՝ առաջ բան թէ դու նկատես:

28. Ընկերական կազմակերպութեան մէջ, ուր բոլոր պաշտօններն առաջուց նշանակուած են, ամեն մարդ պէտք է իր պաշտօնի համար դաստիարակուի. Երբ անհատը թողնում է այն պաշտօնը, որի համար ինքը պատրաստուած է, այլ ևս ոչնչ բանի պէտք է: Դաստիարակութիւնը միայն այն դէպքումն է օգտակար մանկան համար, երբ ճակատագիրը միաբանում է ծնողների ընտրած կոչման հետ. միևս ամեն դէպքերում դաստիարակութիւնը վնասակար է երեխայի համար՝ նոյն իսկ հենց միմիայն նրա տուած նախապաշարումների պատճառով: Եզրիպտոսում, ուր որդին պէտք է անպատճառ իր հօր կոչումն ընդունէր, դաստիարակութիւնն իր հաստատուն նպատակն ունէր, բայց մեզ մօտ, ուր միայն պաշտօններն են մնում և մարդիկը շարունակ փոխուում, ոչ ոք չը գիտէ թէ արդեօք ի վնաս իր որդու չէ՞ աշխատում, իր դասակարգի համար դաստիարակելով նրան:

29. Բնական կազմակերպութեան մէջ, ուր բոլոր մարդիկ հաւասար են, նրանց ընդհանուր կոչումը զուտ մարդկայինն է և ով միայն այդ բանի համար լաւ է դաստիարակուած, պէտք

է դրա հետ յարարերու թիւն ունեցող միւս բոլոր կոչումներին էլ ճշտութեամբ ծառայէ: Իմ աշակերտին կարող են պատերազմական, եկեղեցական կամ դատարանական ծառայութեան համար նշանակել, այդ միենոյն է՝ Ծնողների որոշումից առաջ ընտրութիւնը նրան մարդկային կեանքի համար է որոշելը: Կեանքն է այն արհեստը, որ ես պէտք է սովորեցնեմ նրան: Երբ իմ ձեռքից դուրս եկաւ, հարկաւ նա ոչ պաշտօնեայ, ոչ զինուոր և ոչ էլ քահանայ կլինի, այլ ամենից առաջ՝ մարդ: այն բոլորը, ինչ որ պէտք է լինի մարդս, կլինի, եթէ կարևոր է, նոյնչափ լաւ քան որևէ մէկը: Նոյն իսկ եթէ ճակատագիրը նրան մէկ տեղից-միւսը բռէ, նա միշտ իր տեղը կլինի: Occupavite, fortuna, atque cepi; omnesque aditus tuos interclusi, ut ad me a spirare non posses <sup>1)</sup>).

30. Մեր իսկական ուսումը մարդկային դրութեան հետապոտութիւնն է: Ով մեզնից ամենից լաւ կարող է տանել կեանքի չարն ու բարին, իմ կարծիքով նա է ամենից լաւ դաստիարակուածը: դրանից հետևում է, որ ճշմարիտ դաստիարակութիւնը կայանում է ո՛չ թէ հրահանգների, այլ վարժութիւնների մէջ: Մեր կեանքի սկզբնաւորութեամբ արդէն սկսում ենք մեզ դաստիարակել: մեր դաստիարակութիւնը մեզնով է սկսում: մեր դայեակը մեր առաջին ուսուցիչն է: «Դաստիարակութիւն՝ խօսքն էլ հների համար ուրիշ նշանակութիւն ունէր, որ այժմ չենք ընդունում: այդ խօսքը նշանակում էր «սնուցանել», «մեծացնել» <sup>2)</sup>: Educit obstetrix, ասում է Փարրօն, educat nutrix, instituit paedagogus, docet magister <sup>3)</sup>: Այսպեսով սնուցանելը, վարժեցնելը և ուսուցանելն իրենց նըպատակներով նոյնպէս տարբեր բաներ են, ինչպէս որ տարբեր են մանկաբարձը, դաստիարակը և ուսուցիչը: Բայց այս տար-

<sup>1)</sup> Եպիկուրեան Մէտրոդորոսի խօսքերն են... Շնուածեցի բեզ, ի՞նչ ճակատագիր, ամուր բռնած ունեմ բեզ, համարձակուեցայ ճանապարհներիդ փակելու, այնպէս որ այլ ևս չես կարող ինձ մնասել: Cic. Tuscul. V, 9, 27.

<sup>2)</sup> Խօսքը Փրանսերէն education-ի մասին է, որ առաջագել է լատիներէն educatio բառից: վերջինս նշանակում է սնուցանել, վարժել, կրթել:

<sup>3)</sup> Տէրէնցիոս Փարրօի խօսքերն են. «մանկաբարձը բերում է (մանկանը), դայեակը սնուցանում է, վերահսկողը (paedagogus, մի սարուկ) առաջնորդում է, ուսուցիչը վարժեցնում է»:

բերութիւնները լաւ չեն արուած և լաւ առաջնորդուելու համար՝ երեխան պէտք է միմիայն մի առաջնորդ ունենայ:

31. Մենք պէտք է մեր նկատողութիւններն ընդհանրացնենք, և մեր սանկիկի մէջ դիտենք մարդն ըստ ինքեան, որ ենթակայ է մարդկային կեանքի բոլոր պատահալներին: Եթէ մարդածնուելով ընդ միշտ կապուած լինէր միևնոյն երկրի հետ, եթէ տարուայ մի եղանակը տեւէր ամբողջ տարին, եթէ ամեն մարդ հաստատակէս կեանքի մի որոշ դրութեան մէջ մնար, այն ժամանակ զոնէ որոշ տեսակէտից պիտեան տիրապետող և գործադրուող կրթութիւնը ճիշտ կ'լինէր. երեխային կարելի կ'լինէր իր որոշ վիճակի համար դաստիարակել և որովհետև նա էլ երբէք այդ վիճակից չէր դուրս գայ, ենթակայ չէր լինի ուրիշ վիճակի փոփոխութիւններին: Ի նկատի ունենալով մարդկային իրերի փոփոխականութիւնը, այս դարի անհանդիստ և անդուլ ոգին, որ իւրաքանչիւր սերնդի մէջ ամեն բան կրկին տակն ու վրայ է անում, կարելի՞ է արդեօք աւելի անմիտ մեթօդ հնարել, քան այն, որ երեխային այնպէս է դաստիարակում՝ կարծես թէ երբէք նա իր սննեակից չէ դուրս գալու, կարծես թէ միշտ իւրայինների շրջանումն է մնալու: Եթէ այդ դժբաղդը համարձակուի նոյն իսկ մի քայլ անել դէպի դուրս, եթէ միայն մի աստիճան բարձրանայ՝ կորած է: Այդպիսով սովորեցնում ենք ոչ թէ չարիքին դիմանալու, այլ միմիայն չարիքն աւելի լաւ զգալու կերպը:

32. Մենք մտածում ենք միմիայն մեր երեխային պահպանելու մասին. բայց այդ բաւական չէ. պէտք է սովորեցնենք նրան՝ թէ ինչպէս պէտք է պահէ իրեն իբրև ինքնուրոյն մարդ. ինչպէս պէտք է ճակատագրի հարուածներին դիմանայ, լիութեան և պակասութեան դիմագրէ և թէ ինչպէս պէտք է, եթէ տեղն ընկնի, թէ Խսլանդիայի սառցային դաշտերում և թէ Մալտայի կէծացած ժայռերի վրայ ապրէ: Դու կարող ես բոհարքները գործ դնել, որ նա չը չքանայ, բայց այնուամենայնիւ պէտք է մեռնի, և եթէ նրա մահը բոհոցացողութեան հետեւանքը չլինի, այնուամենայնիւ հոգացողութեանդ արդիւնքն անյարձող կ'լինի: Խնդիրն այն չէ, որ նրան մահից ազատենք, այլ այն, որ իսկական կեանք տանք նրան: Ապրել չէ նշանակում շնչել, այլ գործել, ապրել—նշանակում է բանեցնել մարմնի գործարանները, զգայարանները, ընդունակութիւնները, նրա էութեան բոլոր մասերը, որ մեր գոյութեան զգացմունքն են: